ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-26558 «12» 12 2019թ.

«ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ, ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ք. Երևան, Անդրանիկի փ. 41/36

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Գևորգյան

Երևանի քաղաքապետարանի և «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 22.02.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի Տեխնիկական բնութագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ «Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի ժամկետի ավարտը սահմանված է սույն թվականի դեկտեմբերի 20-ը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի 05.12.2019 թվականի թիվ 16/25932 գրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել է մասնակի, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի, մասնակի (25987800 քսանհինգ միլիոն ինն հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր ՀՀ դրամի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ

ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատ՝ Է. Կիրակոսյան
Հեռ. 011514 129